

Թեղենիսի մերգելային կրաքարերի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը

Գործունեության նախաձեռնողը «Սոլաքար» ՍՊ ընկերությունն է: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում «Սոլաքար» ՍՊ ընկերության գրանցման համարն է 278.110.1326286, գրանցման ամսաթիվը՝ 27.06.2023թ., գտնվելու վայրը՝ Հայաստան, Երևան, Էրեբունի, Ավանեսովի փ. նրբ., շ 8/1, բն. 16 բն:

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան, նպատակը, համառոտ նկարագիրը.

«Սոլաքար» ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի Թեղենիսի մերգելային կրաքարերի երևակման երկրաբանական ուսումնասիրություն, ինչը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետին՝ երկրաբանական ուսումնասիրություններ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակն է պարզաբանել երևակման մերգելային կրաքարերի պիտանելիությունը որպես հումք «Պորտլանդցեմենտ և խարամապորտլանդցեմենտ. Տեխնիկական պայմաններ» ԳՕՍՍ 10178-85, «Ցեմենտներ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ» ԳՕՍՍ 30515-2013, «Ցեմենտներ համաշինարարական. Տեխնիկական պայմաններ» ԳՕՍՍ 31108-2016, «Պորտլենդցեմենտի կլինկեր ապրանքային. Տեխնիկական պայմաններ» ԳՕՍՍ ԳՕՍՍ 34850-2022 և «Ցեմենտներ տրանսպորտային շինարարության համար. Տեխնիկական պայմաններ» ՀՍՍ ԳՕՍՍ Ռ 55224-2022 պահանջներին բավարարող ցեմենտի արտադրության համար:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվելու են հիմք ընդունելով տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի ՈՕ6-Ն հրամանի հավելված 6-ով հաստատված կարբոնատային ապարներով ներկայացված հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգը:

Ելնելով օգտակար հաստվածքի տեղադրման պարամետրերից, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախատեսվում է մինչև հորատանցքերի, հետախուզահորերի և բնական մերկացումների համալիրով:

Երևակման հետախուզումն իրականացվելու է 23 հետախուզական գծերով: Հետախուզագծերի և դրանց վրա տեղադրված հորատանցքերի և մերկացումների միջև հեռավորությունն ընտրված է այնպես, որ հնարավոր լինի օգտակար հանածոյի պաշարները գնահատել արդյունաբերական A+B կարգով: Նախատեսվում է թվով 92 հորատանցքի և 10 հետախուզահորերի անցում: Հորատանցքերի ճիշտ հորատման համար կատարվելու է 92 հորատման հարթակի շինարարություն՝ յուրաքանչյուրը 48մ² չափով:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է վերցնել հանուկային և ակոսային նմուշներ, իսկ բնական մերկացումներից՝ ակոսային նմուշներ:

Կարբոնատային ապարների քիմիական կազմը բնութագրելու համար օգտակար հանածոն բացող յուրաքանչյուր փորվածքից վերցվում են նմուշներ՝ շերտ առ շերտ, իսկ շերտերի մեծ հզորության, ինչպես նաև զանգվածային հանքակուտակների դեպքում՝ 1-ից 4 մ երկարությամբ միջակայքերով (սեկցիաներով):

Հետախուզահորերում նմուշները վերցվում են դրանց հատակից: Ակոսի կտրվածքի մակերեսը ընտրվում է օգտակար հանածոյի համասեռությունից կախված: Հիմնականում կիրառվելու են ուղղանկյան տեսք ունեցող, $3 \times 5 \text{ սմ}^2$ -ից $5 \times 10 \text{ սմ}^2$ կտրվածքի մակերեսով ակոսներ:

Բոլոր նմուշներում նախատեսվում է որոշել CaO-ի, MgO-ի, CO₂-ի, աղաթթվում չլուծվող մնացորդի, SiO₂, Al₂O₃, Fe₂O₃-ի պարունակությունները և շիկացման արդյունքում կորուստները:

Ուսումնասիրվող ապարների բնական տարատեսակների միներալային կազմը, ինչպես նաև դրանց մակատեսքակառուցվածքային (տեքստուրաստրուկտուրային) առանձնահատկությունները ուսումնասիրվելու են միներալաապարագիտական (միներալապետրոգրաֆիական), ֆիզիկական, քիմիական և այլ տեսակի անալիզների կիրառմամբ:

Ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունների որոշման նպատակով նմուշառումը կատարվելու է ապարների տարատեսակները բնութագրող, ոչ պակաս երկու-երեք հատույթներից:

Կատարվելու է նաև հումքի ռադիոմետրիական հատկությունների ուսումնասիրություն:

Նախատեսվում է ուսումնասիրել հայցվող տեղամասի հիդրոերկրաբանական պայմանները, ջրհեղեղային հոսքերի (ծորակների) առկայությունը:

Կատարվելու է տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրություն՝ փլուզումների, այլ բնույթի գեոդինամիկ երևույթների բացահայտման և հետազոտման նպատակով:

Բնապահպանական միջոցառումներից նախատեսվում է.

- փոշեառաջացման կրճատում և վերահսկողություն՝ հորատման լուծույթների կիրառման, հորատման հարթակների ջրցանման եղանակով;

- տեղամասի աղտոտման բացառում՝ կենցաղային աղբի հավաքման և կազմակերպված աղբավայր տեղափոխելու եղանակով;

- հորատման հարթակների և հետախուզահորերի տարածքների լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա;

- շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով տեղամասի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմի վերապատրաստում և ծանուցում շրջանում հայտնի՝ «Կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ»;

- հազվագյուտ երկրաբանական մերկացումներ և հանքաբանական գոյացումներ, երկնաքարեր, հնէաբանական, հնագիտական, գիտական և գիտամշակութային հատուկ արժեք ներկայացնող այլ օբյեկտներ հայտնաբերելու դեպքում աշխատանքների դադարեցում և այդ մասին լիազոր մարմնին տեղեկացում՝ հետագա աշխատանքների ընթացքը պարզաբանելու նպատակով;

- պատահական գտածոների ընթացակարգի կիրառում:

3) նախատեսվող գործունեության իրականացման վայրը:

Աշխատանքները կատարվելու են Հրազդան խոշորացված համայնքի Սոլակ և Քաղսի բնակավայրերի սահմաններում: Երևակումը գտնվում է նշված գյուղերի բնակելի տարածքներից համապատասխանաբար 2.4 կմ հարավ-արևելք և 2.5 կմ արևելք-հարավ-արևելք:

Հողամասի			
Երկրամասի (բնակավայրի) կոդեր	Կողողիմաստներ		Գծային չափեր (մ)
	X	Y	
6	4486552.3403	8473007.3150	74.92
7	4486622.3311	8472980.5789	202.27
8	4486810.6284	8473054.4600	169.92
9	4486975.6300	8473095.0269	71.93
10	4487028.4589	8473143.8485	138.42
11	4487099.0341	8473024.7687	134.40
12	4487087.4010	8472890.8746	7.99
13	4487084.0518	8472883.6253	50.50
14	4487049.2018	8472847.0830	58.74
15	4487004.0576	8472809.5013	170.35
16	4486895.6279	8472678.1205	66.93
17	4486948.9197	8472637.6301	66.89
18	4486938.8103	8472571.5131	136.20
19	4486840.5271	8472477.2177	55.25
20	4486893.7601	8472462.4254	510.96
21	4486657.0745	8472009.5849	53.81
22	4486650.7582	8471956.1512	87.39
23	4486566.3798	8471978.8938	56.24
24	4486517.2931	8472006.3413	36.25
25	4486483.3996	8472019.1884	42.09
26	4486441.3260	8472020.3565	69.70
27	4486371.7870	8472025.0286	20.59
28	4486351.3347	8472022.6936	39.60
29	4486314.5202	8472008.0934	40.25
30	4486274.7836	8472001.6693	349.29
31	4485926.0323	8472021.0389	322.34
32	4485617.3045	8472113.7298	29.22
33	4485595.0075	8472132.6113	157.80
34	4485506.4427	8472263.2115	13.45
35	4485509.7930	8472276.2395	0.00
36	4485509.7936	8472276.2393	632.85
37	4485667.4094	8472889.1476	56.76
38	4485681.5415	4485681.5415	481.90
39	4485824.7248	4485824.7248	

Հողամասի			
Երկրամասի (բնակավայրի) կոդեր	Կողողիմաստներ		Գծային չափեր (մ)
	X	Y	
39	4485824.7248	8473404.2570	171.42
40	4485965.0476	8473305.7907	34.73
41	4485999.7597	8473304.7164	68.47
42	4486050.4956	8473350.6932	13.87
43	4486060.7750	8473360.0084	155.19
1	4486215.9497	8473362.1905	

Մասշտաբ 1:10000

Ռոմպակորում ունեցող անձ

Ռոմպակորում վկայականի հասար

Ստորագրություն

Իրավաբանական անձի անվանում

ՉԿԷԳ

Ստորագրություն

Վճարված չափացուցակ

Հաստատվածի կազմում

28.08.2024թ.

Կ.Տ.

Խնայարար Ավետիսյան
0465

Խնայարար Ավետիսյան
23864948

